ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵՒ) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

= 19 =

Առաջին փոփոխակ

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՄԱՀՈՒԱՆ

Ա.

Քանի դատիս ի հետ մեղաց, է անբզգամ մարդ կատաղած
Զանչափ չարիքդ որ գործեցիր, հերիք արայ դարձիր մեղաց:

Բ.

Ի Ադամայ մինչեւ այսօր շունչ կենդանի զոք չէ թողած,
Դիտեմ չլսես խրատու գրրոց, մեղաւորաց թ'ինչ կայ պահած:

Գ.

Ով որ ունէր բերդ ու քաղաք, դարպասանի ոսկով ծեփած,
Ցետոյ եթող զամէն անտէր, ներքեւ հողուն է պառկած:

Դ.

Ով որ խրմէր զանուշ գինին, գինքն բըտէր բան զխոզ ուռած,
Տեսայ ըզնայ խիստ ատելի, չանուշահոտ գէշ մի ծրգած:

Ե.

Ով որ հեծնոյր ձի բարձրավիզ, ու թուր քաշէր ամէն դիհաց,
Տեսայ ըզնայ խիստ փոշէման, երկու փայտի մէջ պառկած:

Զ.

Շատ աղջկունք, կին գեղեցիկ, ծամն ու վարսերն էր աւրինած,
Նոքայ ունին պայծառ հանդերձ, զէտ զարեգակն են բոլորած:

Է.

Ճաւճին ւ ոլոր առնեն կամաց, լինին ամէն մարդոյ սիրած,
Ի մահուն աւրն են ատելի, գէշ ու զազիր են տեսողաց:

Բնագիր Ա. էջ 23։ Հմմտ. Գ. էջ 306։ Ս. էջ 266։ Տ. էջ 44։

Վերնագիր, Ս. էջ 266։

Ա. — 1. — ... կատարած, Ա։

Բ. — 1. — այսօր — ի քեզ, Ա։

Գ. — 1. — ունի, Տ ... դարպասանի, Ա. դարպասանի, Գ. դարպաս ունի, Տ։ — 2 — ... հողին ի կան պառկած, Գ. ... հողուն է նա պառկած, ՍՏ։

Դ. — 2. — ձրգած — դարձած, Տ։

Ե. — 2. — ... մէջնը պառկած, Գ. մէջ էր պառկած, ՍՏ։

Զ. — 1. — վատ ... որ ծամն ու վարսն են յօրինած, Տ։ — 2 — գերթ, Գ։

Է. — 1. — առնին, Ա։

digitised by A.R.A.R.@

Ը.

Քրիստոս նստի աթոռ փառաց, հատուցանէ վարձ սիրողաց,
Արդարոցըն տայ պըսակ, մեղաւորացն ապաշխարած:

Թ.

Եւ Յովանէս Թուլկուրանցի, սրտի մըտօք զականջդ բաց,
Աստէնս արայ քեզ ճար շուտով, անդէն առնուս պըսակ փառաց:

= 19 =

Երկրորդ փոփոխակ

ԲԱՆ ՊԻՏԱՆԻ.— 4

Ա.

Քանի դատիս ի հետ մեղաց, է անզգամ մարդ կատարած,
զանչափ չարիքդ որ գործեցիր, հերիք արայ դարձ ի մեղաց:

Բ.

Տես ու լսէ խրատու գրոց, մեղաւորացն ինչ կա պահած,
արդարոցն արքայութիւն, փառք ու պատիւ յորդայխաղաց:

Գ.

Բեր ու ծրգէ զահն ի մըտիդ, դու էլ գիտես ինչ կա պահած,
յԱդամայ մինչեւ այսօր, շունչ կենդանի զոք չէ թողած:

Դ.

Էտ որ ունէր բերդ ու քաղաք, դարպաս ունէր ոսկով ծեփած,
նայ մընացեր ամէն թերմաշ, ինքն է իջեր գուբ մի փորած:

Ե.

Էտ որ հեծնէր ձի բարձրավիզ, ու թուր ածէր ամէն դիմաց,
յետոյ եղեւ խիստ փոշիման, յերկու փետի մէջ պառի[կ]ած:

Զ.

Էտ որ խըմէր զանուշ գինին, գինքն բըտէր քան զխոզ ուռած,
նա եղեւ խիստ ատելի, զինչ անպիտան զէշ մի ծրգած:

Է.

Շատ մի կտրիճ մուրայգալի, կամ թէ լինէր մուրուքն էկած,
տեսայ զէն գեղեցիկ սուրաթն, ի հետ հողուն էր շաղըղած:

Ը.

Շատ աղջըներ գեղեցկածամ, ուրենց վարսերն օրինած,
հագնին հանդերձ ոսկի թելով, զինչ զարեգակն բոլորած:

Ը.— 2.— ... ։ ապաշխարող մեղաւորաց, ՍՏ։

Թ.— 1.— Եւ — Է, ՍՏ։

Բնագիր, Դ. էջ 137։ Տես Սիոն, 1952, էջ 268։

digitised by A.R.A.R.@

Թ.

Տես Թ'ինչ եղան յանկարծակի, անտաշ 'ւ անկոփ փայտ մի ծրգած,
ուրենց մահուն օրն ատելի, ուրենքն ամէն սրտի սիրած:

Ժ.

Դեռ այդ յետին համարն չի, յետին համարն է կատարած,
յորժամ ծագի խաչն ի յերկնից, նստի Քրիստոս յաթոռ փառաց:

ԺԱ.

Արդարոցն տայ պսակ, որ ճրգնեցան կացին ի լաց,
մեղաւորացն զնուրն անշէջ, ըզտարտարոս զուրն որդանց:

ԺԲ.

Եւ Յովանէս Թլգուրանցի, զհոգոյ մըտաց այերրդ բաց,
ուղիղ սրտով խոստովանիր, 'ւ ապաշխարէ եւ կաց ի լաց:

= 20 =

ՎԱՍՆ ՍՈՒՏ ՍԻՐԵԼԵԱՑ.— 5

Ա.

Իմ սիրտ, լսէ ւ ականջ արա, որ սիրելի իսկի չըկայ,
Ոչ ղըրացի եւ ոչ եղբայր, ոչ միակեց, ոչ բահանայ:

Բ.

Այս ժամանակըս հանց երեր, ով որ չգիտէր թող գիտենայ,
Զով որ գիտես խիստ սիրելի, հուրն ի բերնէն ի դուրս կու գայ:

Գ.

Թէպէտ շինես շատ սիրելի, մի՛ հաւատար սրտովդ ի նա,
Ցամէն դեհաց փորձէ եւ տես, ապա թէ զքո խորհուրդն ասայ:

Դ.

Շատ մարդ յերեսդ է քաղցրախօս, ի սիրտն բոց կու բորբոքայ,
Սեղնի լինի սուտ սիրելի, ւ ի փորձութեանց ժամն ուրանայ:

Ե.

Քանի ողջ ես ըզքեզ պահէ, գրլխուդ ւ անձինդ պէտ արայ,
Եթէ հաքիմի կարիք լինիս, կեանքդ քան ըզհով անցնի գնայ:

Զ.

Ի հետ անգէտ չար սիրելուն ով երկու խօսք առնու եւ տայ,
Նա ականջովն հանց բան լըսէ, որ միտ դընէ եւ զարմանայ:

Բնագիր, Դ. էջ 138։ Հմմտ. Տ. էջ 42. առնուած 1695 թվ. ձեռագիր Տաղարանէ մը։

Դ.— 2.— ... ապա զխորհուրդն ասա նորա, Տ։

Դ.— 1.— բոց — հուր, Տ։

Ե.— 1.— գրլուխ, Տ։ — 2 — հաքիմ կարի, Տ։ գնայ — ւ երթայ, Տ։

Զ.— 1.— չար — սուտ, Տ։ — 2 — հէնց, Դ։

digitised by A.R.A.R.@

Է.

Իշխանաց քաջ զինաւորն յերակ սրտնեղ տրտում կենայ,
Դայ մօտ ի քեզ նստի հրեշտակ, ելնէ գընայ չար սատանայ:

Ը.

Դու պահէ զսէրըն կանգուն, սիրտդ սիրով թող լինենայ,
Ատելութեան տեղիք մի՛ տար, որ բարութիւն երթայ մընայ:

Թ.

Եւ Յովանէս Թլգուրանցի, աղուոր պահէ զմիտքդ ի վերայ,
Մարդասէրն է աստուածասէր, եղբայրատեացն է սատանայ:

= 21 =

ԽՐԱՏ ՊԻՏԱՆԻ· — 6

Ա.

Մեղաւոր եմ, մեղաւոր, ես ինձ անծամբս վրկայեմ,
Համարիմ թ'այլ մարդ չասէ, զեմ ես գիտեմ զինչ գործեր եմ:

Բ.

Իմ չարերն եմ սերմաներ, հաւասայ յաստենիս կու հնձեմ,
Մեռանիմ 'ւ անցնիմ գընամ, զայլն ի գեհենանըն վրճարեմ:

Գ.

Լուսատուն ինձ լոյս երեւտ, որ զվատն ու զլաւըն ճանաչեմ,
Ես ի յարատն կու հայիմ, 'ւ ի յարենէ լացն եկեր եմ:

Դ.

[Ք]ո ծեռացդ եմ ծեռագործ, ծեռն կու տաս որ վաստակեմ,
Նա կու խըլեմ, զրկեմ, գողանամ, առնում չտամ ու հարկանեմ:

Ե.

[Ո]տքս անցեր է առջեւս յերակ, որ հանապազ ճոխ կու [ք]էլեմ,
Այն ճանապարհն որ չէ բարի, յաւժար կ'երթամ զիս ցուցընեմ:

Զ.

Քո տեսուդ արժան արայ, թէպէտ որ ես արժանի չեմ,
Մի զբեկեալս կոտրեր, ես ի վաղուց ծունկս անկեալ եմ:

Է.

Զիմ սիրուն ընկերակիցն զաւրն կենամ ու բամբասեմ,
Նայ այնաւք յամէն դիմաց, ծեռընկոտոր անյաջող եմ:

Ը.

Եւ Յովանէս Թլգուրանցիս ցանկամ որ զքեզ Տէր տեսանեմ,
Թէ հազար եմ մեղաւոր, դու ողորմած ես կու գիտեմ:

(7) Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

Է. — 1. — Յիշխանաց քաջ և, Տ։ սրանեղ — որ տեղն, Տ։
Թ. — 2. — է, չունի Դ։
Բնագիր, Դ. էջ 139։ Տես Սիոն, 1953, էջ 81։

digitised by A.R.A.R.@